հնար ումեք ձեռնարկել 'ի չինութիւն տաճարին · զի ե-թէ Յոյնք միայն կամին չինել զայն, նորոգեսցեն նախ զմզկիթն Օմարայ և զչրմուղն՝ բերել ջուր 'ի քաղաքն յաւազանաց Սողոմոնի՝ և ապա թոյլ տամք։ Այս միարանութիւն ռամկին հաստատեալ էր երդմամբ յօրէնս և 'ի պաշտամունս իւրեանց · 'ի սոյն նուազ եւս այսպէս խափանեցաւ խորհուրդն Յունաց, եւ լռեցին ժամանակ ինչ, այլ ոչ դադարէին 'ի նախատելոյ եւ 'ի ձաղելոյ զՀայս, որ պաշարեալ նստէին 'ի սուգ տրտմութեան՝ զի փոխանակ դրամոց՝ ունէին զբաղմագումար պարտս։ Թէպէտեւ ետուն ընթեռնուլ առանձին զՀին հրովարտակս Միւֆթիի քաղաքին, այլ ընկալան պատասխանի՝ թէ առանց դրամի ոչ ինչ օգնէ։

Տեսեալ Յունաց թէ ձեղքեցաւ քաղաքն եւ խոշ են գործոց իւրեանց, այլ իմն խորհուրդ 'ի մէջ առին · ձգել զբովանդակ այլազգիս 'ի կողմն իւրեանց՝ առանց խորելոյ զանարգն և զպատուականն · նախ շահեցին զմիտս դատաւորին՝ տալով նմա 115 քսակս դրամոց · նոյնպէս և այլոց՝ ըստ կարգի և աստիճանի, ձգեցին 'ի կողմն իւրեանց նա և զբարեկամս Հայոց և Լատինաց, և զայնոսիկ իսկ, որք աշխատութեամբ իւրեանց պահէին զորդիս և զընտանիս 'ի վանացն Հայոց՝ եւ յետին ազքատն՝ որ կրէր զանուն Տաճկի՝ էառ 40 ըռեալ, և այսպէս բովանդակ այլազգիք քաղաքին դարձան 'ի կողմն Յունաց, և Հայք քակեցան 'ի բուն բարեկամաց իւրեանց՝ և կային 'ի տարակուսանս, և յօրէ օր սպասէին հանդիպիլ մեծի փոթորկի և կրել զանպատուութիւն, թող զյոխորտանն եւ զմեծարանէն Յունաց։

Ի սոյն աւուր եկեալ էր յԵրուսաղէմ Եւսուֆ աղա՝ զինակիր Եւսուֆ Փաշայի կուսակալին Դամասկոսի՝ բերեալ գիր 'ի նմանէ · վերստին գումարեցաւ ժողովն ('ի 16 Յուլիսի)։ Ի սոյն հանդէս կոչեցան Հայք և Լատինք · նախ ընթերցան զՀրովարտակն և ապա զՀրաման Կուսակալին՝ որ ասէր, ըստ հրամանի Արքային եւ համաձայն Շէրիի օրինաց ելանել 'ի քննութիւն և չինել։ Հարցին զՓոխանորդն Լատինաց՝ թէ զի՞նչ ունիք ասել առ այս, և նա արար պատասխանի՝ այսպիսի խնդիրք դատաստա-